ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան	07.08.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/180

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ ոստիկանություն
Մասնակից՝ «Զի Էնդ Զի Քոնսթրաքթ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝ «Զի Էնդ Զի Քոնսթրաքթ» ՍՊԸ-ի տնօրեն Զ. Մուրադյան

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
« ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ- 2020-ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑ» ծածկագրով գնանշման հարցում, շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 23.07.2020թ.-ի թիվ 26/26-1/11046-2020 գրությամբ «Զի Էնդ Զի Քոնսթրաքթ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ոստիկանության 20.07.2020թ.-ի թիվ 3/27/29524 գրության հիման վրա, 23.07.2020թ.-ին «Զի Էնդ Զի Քոնսթրաքթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 23.07.2020թ.-ին:

24.07.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/180 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

30.07.2020թ.-ին և 07.08.2020թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 30.07.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 07.08.2020թ.-ին:

2. ՀՀ ոստիկանության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ ոստիկանությունը 20.07.2020թ.-ի թիվ 3/27/29524 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել է, որ ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի համաձայն՝ ուղարկվում է «ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ- 2020-ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑ» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած «Զի Էնդ Զի Քոնսթրաքթ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստաթղթերը՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով:

3. «Զի Էնդ Զի Քոնսթրաքթ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը 24.07.2020թ.-ին գրությամբ դիմել է «Զի Էնդ Զի Քոնսթրաքթ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.07.2020թ.-ի թիվ 26/26-1/11046-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում:

«Զի Էնդ Զի Քոնսթրաքթ» ՍՊԸ-ի տնօրեն Զ. Մուրադյանը մասնակցելով 30.07.2020թ.-ին հրավիրված նիստին, պարտավորվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պետական ռեգիստրի գրանցման վկայականի օրինակը, սակայն մինչև սույն գործով որոշման հրապարակման օրը, վերջինիս կողմից որևէ փաստաթուղթ չի ներկայացվել, որով կհավաստվեր Զ. Մուրադյանի «Զի Էնդ Զի Քոնսթրաքթ» ՍՊԸ-ի տնօրեն լինելու, ըստ այդմն էլ՝ ընկերության անունից հանդես գալու իրավասություն ունենալու հանգամանքը:

4. <u>ՍՑ-LO-2020/180 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ ոստիկանության կողմից շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 02.07.2020թ.-ին հայտարարվել է « ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ- 2020-ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Զի Էնդ Զի Քոնսթրաքթ» ՍՊԸ-ն:

iii. Մասնակիցը թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարարությամբ, հայտնել է, որ ցանկություն ունի մասնակցել ՀՀ ոստիկանության կողմից « ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ- 2020-ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑ» ծածկագրով հայտարարված գնանշման հարցումի 1-ին չափաբաժնին և Հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ: Մասնակիցը նաև հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-

2020-ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑ» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 10.07.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Զի Էնդ Զի Քոնսթրաքթ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտերում առկա չեն հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ բացակայում են հրավերով պահանջվող շինարարական լիցենզիաները և աշխատանքային ռեսուրսները:

v. Հանձնաժողովը որոշել է ծանուցել Մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vi. Հանձնաժողովի քարտուղարը՝ նույն օրը, 10.07.2020թ.-ին policetv.gnumner@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեից նույնաբովանդակ ծանուցում է ուղարկել Մասնակցի z.muradyan8895@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեին:

vii. Հանձնաժողովի 14.07.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Զի Էնդ Զի Քոնսթրաքթ» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել անհամապատասխանությունների շտկված տարբերակը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.07.2020թ.-ի թիվ 26/26-1/11046-2020 գրությամբ «Զի Էնդ Զի Քոնսթրաքթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (21.05.2020թ.-ի թիվ 778-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը ներկայացնում է նաև իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ, հաշվի առնելով հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի առաջարկած ընդհանուր գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տասը տոկոսից: Աշխատանքների բաժինները չեն կարող արհեստականորեն միավորվել կամ առանձնացվել:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է...:

Ընթացակարգի Հրավերի 4.3-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը ներկայացնում է իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ, հաշվի առնելով սույն հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել սույն հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տաս տոկոսից: Աշխատանքների բաժինները չեն կարող արհեստականորեն միավորվել կամ առանձնացվել:

Հրավերի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյուն¬քում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխա-նությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի հաստատած հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության

մասին հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված լինելու դեպքում՝ հայտի ապահովում, ծավալաթերթ-նախահաշիվ և այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ընդ որում՝ որոշ բացառություններով, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ ոստիկանության կողմից շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 02.07.2020թ.-ին հայտարարված « ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ- 2020-ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Զի Էնդ Զի Քոնսթրաքթ» ՍՊԸ-ն թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարարությամբ, հայտնել է, որ ցանկություն ունի մասնակցել ՀՀ ոստիկանության կողմից « ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ- 2020-ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑ» ծածկագրով հայտարրված գնանշման հարցումի 1-ին չափաբաժնին և Հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ: Մասնակիցը նաև հայտարարել և հավաստել է, որ բավարարում է « ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ- 2020-ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑ» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովի 10.07.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Զի Էնդ Զի Քոնսթրաքթ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտերում առկա չեն հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ բացակայում են հրավերով պահանջվող շինարարական լիցենզիաները և աշխատանքային ռեսուրսները, ինչով պայմանավորված Հանձնաժողովը

որոշել է ծանուցել Մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի քարտուղարը՝ նույն օրը, 10.07.2020թ.-ին policetv.gnumner@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեից նույնաբովանդակ ծանուցում է ուղարկել Մասնակցի z.muradyan8895@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեին:

Հանձնաժողովի 14.07.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Զի Էնդ Զի Քոնսթրաքթ» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել անհամապատասխանությունների շտկված տարբերակը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն

հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ չշտկելով հայտում առկա արձանագրված անհամապատասխանությունները, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Զի Էնդ Զի Քոնսթրաքթ» ՍՊԸ-ն, Պատվիրատուի կողմից հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամանակահատվածում, չշտկելով արձանագրված

անհամապատասխանությունները, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.07.2020թ.-ի թիվ 26/26-1/11046-2020 գրությամբ «Զի Էնդ Զի Քոնսթրաքթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2020/180 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Զի Էնդ Զի Քոնսթրաքթ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**